

ՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|---------------------------|--------|
| Պաշտոնային համար | 12 Ձր. |
| Տարեկան | 6 » |
| Վեցամսեայ | 15 » |
| Արտասահմանի համար տարեկան | 8 » |

| | |
|------------------|------|
| Անկերիկայի համար | 3 |
| Տարեկան | 1.50 |
| Վեցամսեայ | 0.75 |

Մանուցումն տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. է. երեսին առաջին անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայնի համար ձեռքի 40 սանթիմ.

ՇԱՐՋՈՒՄ

ՎՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՄՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԿՏՄԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՔՇՈՒԹՅԱՆ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկեյ իւրազրուրեանս հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)
Պաշտոնային համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրուրիւնք եւ չեւ տուր

ՇԱՐՋՈՒՄ Ի ԲԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՏԱՆԿՆԵՐԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՍԱՍՆՈՅ ՇԱՐՋՈՒՄՆԵՐԸ

18 Մայիսին Պոլսէն Վիեննա կը հեռագրեն որ Սասունէն Մուշ փախածները կրնան, երեսներ եւ ծերեր են։ Անորանիկը ձեռք չէ անցած։ Բ. Դուռը դրամական օգնութիւն զրկած է փախստական կրնան, երեսներուն եւ ծերերուն, որոնց թիւը հինգ հազարի կը հասնի։ Նայ ապստամբները յաջողած են քանի մը թուրք-քրդական զիւղեր հրդեհել։

17ին Պոլսէն կը հեռագրեն, թէ ներքին գործոց նախարարութիւնը յայտնած է հայոց պատրիարքին որ կառավարութիւնը դրամական նւապատ զրկած է Սասունէն Մուշ ապստամած մօտ երեք հազար կրնան, երեսներուն եւ ծերերուն։ Ապստամբագետ Անդրանիկ վերջին ճակատամարտի մէջ թէեւ վիրաւորուած է, բայց ձեռք չէ անցած։ Բ. Դուռը շրջաբերականով մը օտար ղեկավարութեանց կը հաղորդէ որ փախստական հայերը— կրնան, ծերերը եւ երեսները—գրաւոր կերպով յայտարարած են որ հայ ապստամբները զրկուած ստիպած են ապստամբիլ, ընդդիմացողներուն կը հարածեն եղեր, ինչպէս նաեւ հրդեհած են թուրք գիւղեր։

Մայիս 18ին Պոլսէն Լոնտոն կը հեռագրեն թէ Բ. Դուռը հայոց պատրիարքին հրահանգած է որ հայ կանանց արգիլէ կարմիր զգեստներ հագնիլ, որովհետեւ այդ կը նկատուի իր ցոյց մը Սասունի զէպերուն առթիւ։

Մայիս 17 թուականու Կ. Պոլսէն կը հեռագրեն «Յայթ»ին թէ եւրոպական հրեպտոսներէն դեռ տեղեկութիւններ չեն ստացուած, որոնք հաստատէին մինչեւ այսօր թրքական զորքերէ ըլլած լուրերը, բայց հիւսպատուները տեղեկագրած են, որ Պիթիսի վախին եւ զօրավար Սալիսի փաշա Մուշ վերադարձած են ձգելով մաս մը զօրք Սասունի մէջ։

Մայիս 20ին Բեթերսպուրկէ Պերլին կը հեռագրեն, թէ կովկասեան հայերու մէջ մեծ յուզում կը տիրէ, թուրքիոյ սահմանին կից զօրքերու քանակութիւնը շատցուած է. որպէսզի առաջը առնուի հայ հրոսախմբու, որոնք թուրքիա կուգեն արշաւել Սասնոյ մէջ պատահած շատ մը սպանութիւններու պատճառով։

Այս օրվան մեր ընթերցողներին հաղորդած, լուրերը Սասնոյ ապստամբական շարժումներին մա-

սին աւելի մխիթարական եւ աւելի սրտապնդող են, որովհետեւ նախ նրանք մեզ աւետում են թէ Մուշ իջած սասունցիները կազմում են կրնան, երեսները եւ ծերերը, ու դրամական համոզում են ստեղծում մեր մէջ որ Սասունի կուսուրդը եւ դիմադրելու ընդունակ տարրը, ինչպէս եւ նախապէս յայտարարեցին եւրոպական թերթերը, ապստամբացեալներին հետ միասին մնացել են իրենց գրաւած դիրքերում, շարունակելու համար սկսած գիմադրութիւնը, որ ստրկացած հայութեան վերածնութեան եւ ինքնճանաչութեան հասնելու պատմութեան փառուոր էջերից մէկը պիտի կազմէ։

Սասունից հեռացել են միայն ծերերը, կիները եւ մանուկները. այսինքն նրանք, որոնք կուսել չը կարողանալով հանդերձ, մեծ մտառանջութեան առարկայ պէտք է լինէին կուսողների համար, ակամայ խոչնդոտներ հանդիսանալին եւ պաշար սպառէին։ Հրաշալի տակտիկա կուսող քաջերի կողմից, որոնք որոշել են մինչեւ վերջը անկաշկանգօրէն գիմադրել թշնամուն եւ թոյլ չը տալ նրան տիրանալու Սասունի անառիկ բարձունքներին։

Ոչ պակաս խելացի տակտիկա է ապստամբների կողմից եւ թրքական ու քրդական զիւղերը հրդեհելը։ Այդ քայլով ապստամբները ուղեցել են իրենց շուրջը մաքրել թուրք զօրքերի աջակից հանդիսացող տարրից, միեւնոյն ժամանակ սարսափ ազգել որպէսզի նրանք այլ եւս չը յանդգնեն Հայ գիւղերի վրա յարձակումներ գործել։

Այս բոլորը ապացուցում են որ կուսող, ապստամբ Սասունը կանգուն է. նա կայ, հակառակ թրքածին հայերի բաղձանքին եւ յայտարարութեան։

Այս, կուսող Սասունը՝ իր քաջերով պաշտպանված, կանգուն է. ու ապստամբական գործակը ծածանում է նրա բարձունքների վրա այնքան վառ կերպով, որ

նրա արտացոլումները անդրազաննալով երկրորդ պալատի մէջ Սուլթան Ապտուլ-Համիտին ստիպել են տալիս կարծելու որ Պոլսի մեղկ ու փոփոկասուն հայ տիկիներն անգամ յեղափոխականապատմաների են վերածվել, որովհետեւ կարմիր զգեստներ են հագնում։

Սասունից վախենում է Համիտը. Սասունը պատճառ եղաւ աշխարհի առջեւ հռչակելու թրքական գազանութիւնները եւ շեշտելու Բերլինի դաշնագրութեան հայերիս ի նպաստ որոշված յօդուածը, նրան վերածելով մայիսի 15ի ծրագրին. եւ այսօր էլ նոյն Սասունը, Համիտի աջակցի շարած վիճակում, կրկին ասպարէզ է եկել աւելի խրոխտ, աւելի յանդուգն ու աւելի ճարպիկ կերպով. այն էլ այնպիսի մի ժամանակ, երբ եւրոպայի պատմութեանց մի քանիսը իրենց ժողովրդներով միասին համակրութիւն են ածում զէպի մեզ եւ ապստամբութիւնը տարածվելու եւ երկարելու պարագային կարող են խտորէն պահանջել չիրագործված ծրագրի անյապաղ իրագործումը։

Այս, Սասունը, կուսող Սասունը կանգուն է, եւ ինչպէս երեւում է անդրդիւրի կերպով որոշել է թոյլ չը տալ Համիտ աղայի շնիկներին տիրանալ այն բարձունքներին, որոնց ծոցերում տաստարի առաջ ձուլ կերպով երեւան եկաւ դարերով ստրուկ հայ ժողովրդի ապստամբական ոգին ու այսօր խոստանում է իր վէս օրինակով վարակել այն հայ մարդկանց, որոնց սրտում պըլպըում են ազատութեան կայծերը։

ատամն ընդ ատաման սկզբունքն է տիրապետում այսօր Սասունի քաջերի ուղեղում եւ սրտում. միակ սկզբունքը, որի գործագրումով միայն կարելի է թուրքին եւ քրդին զսպել, եւ որից երկար դարեր հրաժարվել էր հայը. շնորհիւ մեր ստոր հոգեւորականութեան, շնորհիւ մեր թրքածին եւ թրքասուն ազաների, շնորհիւ մեր բարոյապէս փչացած բայց զարգացած յոր ջորջվող դատարկազուխ կապիկների, որոնց նմուշները վանազան դիմակների տակ մինչեւ օրս էլ վխտում են մեր մէջ։

Ու տեսէք, թէ որչափ հրաշալի սկզբունք է «ական ընդ ական» ներկայ դարում, երբ յարգվում է միայն ուժը. Այսօր ամբողջ եւրոպական մամուլը համակրանքով է վերաբերվում զէպի մեզ. Երբ միայն մորթվում էինք՝ մեզ ոչխար, ստոր ցեղ էին անանում. իսկ այսօր երբ մենք էլ ենք ցոյց տալիս որ ակուսներ ունենք, մեզ յարգում են. Մորթենք շատ թուրք զինւորներ, աւերենք շատ թուրք եւ քրդի գիւղեր, թուրքերի եւ քրտերի անօթի, անտուն երամներ ստեղծենք, հազարաւոր թրքոհիներ այրի թողնենք. այն ժամանակ մեզ աւելի կը յարգեն, աւելի կը սիրեն, եւ կասեն—ընդունակ եւ արժանի ենք անկախ հայրենիք. ինքնուրոյն կեանք ունենալու։

ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԻՍ

Սիրելի Արմէն, կեանք կոչուած աշխարհի սանձամեծ առեղծուածը որքան անակնկալներով լեցուն է. ոմանք դառն ու ազի, ու ոմանք ալ անուշ ու մխիթարական. Գանի որ կապրինք պէտք պատրաստ ըլլանք ընդունելու թէ՛ անոնց հարուածը մեր կեանքին վրայ, եւ թէ՛ անոնց քաղթը հեղտանքը մեր սրտին մէջ։ Այս անգամ անակնկալը երկրէն է, Հայրենիքէն։

Անշուշտ արդէն հասած է ականջիդ հայ քաջերուն մանչիւնը, որը Տօրոսի բարձունքներէն հնչելով կուգայ արձագանք տալ Եւրոպայի խառնիճազան անսամանութիւններուն մէջ: Հայ կորուսները կը կուռին, կուրծք կուտան թշնամիին ուղիկանական ալիքներուն ու զանոնք փարաւոնեան դարերու հրաշագործութեամբ մէկգիւղ զատելով իրարմէ, իրենք մէջտեղէն այդ քառասկան վտանգաւոր անհունութիւնէն յառաջ կը սողան, յառաջ անվախ ու անկասկած:

Ժամանակ մը, սիրելիք, երբ կը տենչալինք որ պոռնիկ Եւրոպայի խըլացած ականջներուն հասցնենք մեր դառնաղէտ վիճակի ահաւոր եղբարահանութիւնը, գիտե՛ս, քանի հազարներու լաց ու կոծին, արիւն արցունք թափելուն պէտքն կը զգայինք: Ի՛նչ աշտարակներ պէտք էր որ կազմէինք զիսկներու կոյտերով ու զանկերու անկանոն բարձութիւններով, որոնցմով կարողանայինք արժանանալու մէկ աննշան ուշադրութեանը Եւրոպային: Մինչև որ ցաւը, տառապանքը ծով զառցած չըլլար մեր երկրին մէջ, պէտքը չէր զգար ան աչքը հոն: Հայաստանի բազմաչարչար իրականութեանը դառցնելու, քանի որ ան իր քունին մէջ հանգիստ էր ու խաղաղ, ու Հայաստանի լուս, մունջ ցաւը չէր կարող վերցնել իր անո՛նչ հոնգիտար, ծով եսամուկ հեշտանքը...:

Ժամանակները որքա՛ն են փոխուած այժմ, զէպքերու որքա՛ն տարբեր իրականութեան մըն է որ ականատես կըլլանք: Հայը այլեւս գիտակցութիւնը ունեցած է ճանչնալու հիմնովին իր ներկայ ճակատագրական վիճակը: Ան այժմ իր գարհուրելի կացութիւնը տեղեկացնելու համար, չէ թէ կողբայ կարսասուռէ, այլ կը գոռայ, կը մոռնչէ: Իր վիճակին բարւոքում մը գտնալու, հայրենայինը համար ո՛չ թէ կը մուրայ, կը պողատէ այժմ այլ կը պահանջէ՛, կը ստիպուի: Ան աս է ներկայ կեանքի պահանջը, Հրացանի գոռում մը, գնդաւորի մը սուրբը արդէն բաւական են արթնցնելու Եւրոպային իր անսարբեր հիասթափութիւնը:

Մեր է՛ն մեծ օգտակարութիւնը ազգային պարտականութեան հասնիչ պիտան այն ատեն կարող ենք ազգին սեղանին վրայ գոհ սրտով ներկայացնել, երբ բնութեամբս իրով ու անցեալի փորձառութիւններէն դաս առնուինք:

Ուստի գիտնանք օժամանակի պահանջը: Այժմ բան իր ժամանակը ո՛նք, կուգայ ժամանակ մը երբ մարդ խոսելու ճառելու է միայն, նոյնպէս կայ ժամանակ մը երբ գրիչը կարող է ինչ մեծ գրքեր խաղալ, եւ այդ ժամանակներն անցա՛ն, հեռացա՛ն: Միւրեւիտ ներկուն գրիչ, խօսք չէ որ կը պահանջէ այլ զգործո՛ւ, միայն զգործո՛ւ:

Շատ անգամ բառերը յօգս կը ցնդին առանց ո՛ր է արդիւնքի. յաճախ թուղթի վրայ սեցած բառերը միայն բառ կը մնան անհետեւանք, անօգուտ: Բայց ներկայի հայ-իրականութիւնը գործերու տեղեր կը դնէ մէն մի հայու առջին: որոնց գործադրումը անպայմանօրէն անհրաժեշտ է: Ան հայ անհատը եթէ կուզէ որ փայլուն յոյսեր դնէ անհոգի ապագային վրայ, պէտք է որ ինք ծոյլ ալնկալուով մը չըլլայ յոյս ուրիշ իր մի քանի ազգակիցներուն վրայ դնելով, այլ գիտնայ նաեւ իր պարտքը ու ըստ այնմ գործի:

Ի՛նչ կրնան բուռ մը քաջեր ընել, երբ անոնց ետին ազգին մեծամասնութիւնը անհոգ անսարբեր կը մնայ ու «նայինք ի՛նչ պիտի ընեն» ըսելով յանցապարտ սպասումը կուռնայ միայն: Այլեւս ժամանակ է, եթէ աս է՛ն մեծ պատահալիքն այլ կորսնցուցնենք, ա՛խ, ինչ մեծ սեւ դատաւիճիկ մըն է պահուած ազգին համար: Հողիս, պէտք է ժամանակի պահանջը գիտնանք...:

Տեղական թերթերը օրը օրին հեռագիրներ կը տպագրեն Սասունի ներկայ շարժումներու մասին: Դեռ վերջերս «Տէլի» թէլեկրաֆոնի մէջ հեռագիր մը երեւցաւ Պաքուէն որ կը տեղեկացնէր ընդհարում մը թուրք գիւղերու միջեւ: «Կուր» անկէ կը կրօն թղթակիցը օտեւ երկար արիւնահեղութիւնէ մը վերջը 1600 զիսկներ կը փոստէին զաշտին երկայնքին վրայ, որոցմէ 900ը հայոցմէ: Եւ 700 ալ թուրքերէն էին: Որքան որ կարող ենք գուշակել, որուն մէջ շատ հուսանական է որ թուրքերը մեծ կորուստ մը տալով իրենց վրէժը չըջակային: Գիւղացիներէն առած են զանոնք անխնայ սուրբ անցնելով:

Երկրորդ հեռագիր մը նոյն թերթի մէջ, զարձու Պաքուէն, կրկին կը տեղեկացնէ ի՛նչ Մուշի առաջնորդը ու կուսակալը համաձայնած՝ Ս. Ա. Լաքից վանքը կը դիմեն ու Սուլ

թանի կողմէն բաւական խոստումներով վանահայրն ալ համոզելէ վերջ՝ պատգամ մը կը խրկեն Անդրանիկի ընկելով թէ կուզեն խաղաղութեան զաշտը կապել: Անդրանիկ չի մերժեր պատգամը, ու Հրայրի հրամանին ներքեւ 125 հոգի կը մեկնին որոշուած տեղը: Բաւական մտտեցած կըլլան վանքին, երբ կը գուշակեն թէ զօրքերու երկար շղթայով մը պամիջապէս: Ան կուզեն զէպի լեռները ելլալու փորձ մը ընել, Փորձը չի յաջողիր: Զինուորներ արդէն շղթայած են գիրենք: Վերջին յոյս մը կը մնայ իրենց, շղթան կարել ու անցնել... Ան այդ յանգուզն ձեռնարկութեան հետ անդ կուրը կը սկսի: Հայ արեւմտեաները հրաշալի յաջողութեամբ շղթան կը կտրեն ու կանցնին ետեւին ձգելով: 125ի շալի թուրք զիսկներ ու բազմաթիւ վիրաւորներ: Իրենց կորուստը կըլլայ միայն իրենց պատ՝ Հրայրը ու երեք վիրաւորներ: Մնացեալ խումբը չուտով կանհետանայ, իրեն հետ տանելով սա համոզումն ալ թէ հայ կղերին մատը միշտ թափխում է թշնամիի վատ դաւազութեան մէջ, ու անոնք շատ անգամներ փոխանակ ի սէր իրենց ազգին սպասկար ըլլալ ջանալու, յոգուտ թշնամիին է որ կը գործեն...:

Վերջին լուրը, որ հրատարակած է «Տէլի» թերթը, կուգայ պատմել մեզ թէ բարբարոս թշնամին այլեւս յուսախար յեղափոխականներուն ո՛ր է է կերպով մահաբախ հարուած մը տալէ, այս անգամ Սասունի շրջակայքի գիւղերը թնդանովի է բռնած: Նոյն լուրը կուզէ հաստատել թէ իրականորէ 25-30 հայ գիւղեր աւերակ դառաւ: ցած են, Բնակչութեան ո՛ր է զնաս հասնելը չի շեշտեր, միայն կը յիշէ թէ գիւղացիները ահաբեկած այս յանկարծակի յարձակումէն, առանց երկար խորհելու ահագին բազմութիւններով լեռները կը բարձրանան, յեղափոխականներուն ճով սպասուած գտնալու, ու անոնց ճիւղ մէկտեղ կուռնելու եթէ հարկը պահանջէ...:

Աստի, սիրելիս, կրնաս գուշակել թէ ի՛նչ է ներկայ հայկական իրականութիւնը, Հրացու թաթկած է Մասիսի գագաթին, որը իր հրավառ բոցերը սկսած է արգէն հասցնել նոյն իսկ մինչև Եւրոպայի անհրաժեշտ հորիզոնը, Կուրը սկսած է այժմ, անհղորէն և վայ անոնց՝ որոնք կու-

զեն առաջըր անձնու խոհեմութիւնը ունենալ: Ծակասամարտի անհրաժեշտութիւնը իրականութեան հողին վերայ է դրուած, որուն տակէն պէտք է ծլի այն ցանկալի ապագան որուն ժամանումին ամէնքս ալ անհամբեր կըսպասենք, ու այդ ապագան պիտի յի ծլի, պիտի չի ծաղկի մինչև որ ան հողը չի կարողանաւք ոտոգել պարտատեցնել թշնամիին համե՛ղ արիւնովը...:

Կուրն է հարկաւոր՝ ներկայի դժոխութեան հայ կեանքը բարձրախելու, ու այդ կուրը արդէն սկսած են հասնելու սատուածացած հոգիները: Իսկ վայ այն հայուն որ ժամանակին պատրաստ չի գտնուիր իր պարտականութեանը սահմանին մէջ ընելու այն ամէնը, որոնցմով պիտի կարողանայ շարունակել տալու կուրը, միեւնոյն ժամանակ յառաջ՝ յոռաջ մղելով ազատութեան ախոյեանները, զէպի իրականացումը մեր բոլորի պատած գաղափարին...:

Փոյգ
Վարդան
28 Մայիս 1904
Լոսնոն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Նէշուլ, 12 Մայիս 1904

Այս տարօրինակ երկրին մէջ երբեմն տարօրինակ բաներ ալ մեր հոյ կեանքին մէջ կը պատահին: Մէկ քանի ամիս առաջ էր, որ Ալֆարիտոնները իրենց կեղծ «Հնչակ»ը Լօստոնէն Բոսթոն փոխադրեցին:

«Հնչակ»ը տօլարներու այս երկիրը փոխադրելէն ասոյ ինչ, մեկ կըսպասէինք, որ այս մարդիկը այլևս իրենց ձայները պիտի կտրեն և հայ յեղափոխական գործին մասին բառ մը անգամ չպիտի առնեն բերաններին, որովհետեւ Հայաստանէն այնքան հեռու, Պոսթոնի մէջ եղած յեղկեղորն մը արգէն հակասութիւն մըն է ինք իր մէջ, Բայց չէ՛ մե՛նք շատ սխալած ենք եղբար Ալֆարիտոններէն այդպիսի բան մը սպասելով: Այս մարդիկը ոչ մի-

«ԿՐԱԿՈՏ ԶՈՒՐԸ»

(Միթիսի կեանքից)

(Թարգ. ռուսերէնից)

Ե.

(Շար. Առաջին քիւիւն)

—Ահա նւիրում եմ տղայիդ, ասեց երէցիկներ, իր շւէրը գնելով սեղանի վրա:

Ու այնպիսի քնքշութեամբ նա յեց մանկան, որը գտնվում էր Մարիայի գրկում, որ Բոյագիրի սիրտը շարժվեց, հոգին ուրախացաւ: Երէցիկները գեր, սպիտակամորթ ու սիրուն էր. մազերը խարտեալ էին, աչքերը մոխրագոյն. սամոնները զարմանում էին որ նա համաձայնել է մի ոչ գեղեցիկ եւ խոշոր քունքերով տէրտէրի կինը լինել:

Երբ Բոյագիրը նկատեց թէ իր կընտը հերարսիրում են անուշ օղիով,

մտածեց որ մկրտութեան համար վարձ նշանակված շնիկներին մորթերին դեռ երեք հատ էլ պէտք է աւելացնել. բայց երբ խաչն ու երկսայի շապիկ էլ տեսաւ, մտածեց թէ երէցիկնոյ յոյանքն էլ արժանի է մի բան աւելցնելու:

Հէնց այդ միջոցին լսվեց հայր Իվանի ձայնը.

—Դեհ, սակարկենք:

—Լաւ:

—Ի՛նչ ես բերել:

—Տասը շնիկի մորթ քեզ համար, տէր հայր... և ինչպէս չաւելացնել երէցիկնոյը, չապիկ եւ խաչի համար:

—Մեղք է չաւելացնելը, կրկնեց նա համոզված կերպով:

—Ինչպէս չէ. ասեցին բարեկամները, պէտք է աւելացնել:

Եւ Բոյագիրը իր տղայի մկրտութեան համար տեւց 15 շնիկի բոլոր մորթերը: Տարուց յետոյ նա իսկոյն զգջաց եւ սկսեց չաւել թէ որչափ դրամ կը բռնէին մորթիկները, Լան-

դուրի աւած գնով մորթիկները արժէին երեսուն ռուբլի, իսկ հայր Իվանը որ քաղաքից նամակ էր ստացել մորթի գների մասին, հաշուեց որ 60 ռուբլի կը բռնեն. ուրախութիւնից այնպէս փնչաց որ իր մտքերի մէջ խորասուզված Բոյագիրը կարծեց թէ տէրտէրը մի բան աւաւ. այն, ինչ որ միշտ ասում է սամոններին:

—Քիչ է:

Աստուած վկայ, էլ չըկայ, պատասխանեց Բոյագիրը. ներքի դուրաւ մարդ ես, շապիկը, խաչը... միթէ ես չե՛մ հասկանում, յաւիտեան կը վճարեմ...:

—Ինչպէս չէ, ինչպէս, հաստատում էին միւս սամոնները եւ վաւերացնում Բոյագիրի ձեռքը վճարելու պատրաստակամութիւնը:

Մատուցում ցուրտ եւ մութ էր. մեղրամոմի վաւոված մոմերը թոյլ կերպով ու կարմիր դողողուն շողեր արձակելով պղպուտ էին, այնպէս որ

կարելի էր կարծել թէ շուտով պէտք է մարեն ու նեղիկ մատուոր իր ձեռնի մէջ թաղված կանանց երկաթէ վանդակապատով միասին պէտք է ընկղմի անթափանցիկ խաւարի մէջ:

Սամոնները հետաքրքրութեամբ զննում էին մատուորը եւ իրարու հետ նկատողութիւններ փոխանակում: Նրանք զարմանում էին, թէ այն Աստուածը, որի մասին միտումնաբեր յայտարարում էին թէ այն խարիչ աստուածներից ամենամեծն է, տեղափոխվում է այդպիսի մի նեղ տան մէջ: Նրանք մտածում էին թէ Աստուած համար ամենալաւ տաճարն է անսահման ու աստղազարկ երկինքը, այդ պատճառով էլ աղօթելու համար բարձրանում էին բարձր բլուրների վրա, որպէսզի տաճարին աւելի մոտիկ լինէին: Իսկ ըլուրների վրա թաղում էին իրենց մեռելներին:

Իսկ այստեղ, մատուցում մութ էր, ինչպէս փոսոււմ. ձեռնի մէջ կրկնված մատուորը իրապէս գետնափո-

այն իրենց ձայնը չեն կտրած, այլև գեա իբրև յեղ. կազմակերպութիւն Հայաստանի ներկայ տագնապալից դրութեան մասին բաներ կը ճառեն:

Քանի-քանի տարիներ է որ Ա. մերիկահայի արևն քրտինքի արդիւնք եղող տոլարները կը շորթեն այլևայլ պատրուակի տակ, և մէկ սէնդի անգամ յեղ. գոյծ չեն կատարեր և չեն ալ ուզեր կատարել: Այս անգամ անոնք բուկած են տարբեր միջոցներ ձեռք առնել, և ժողովրդի քսակէն զբրամ գուրս քայլել: Մարդիկ վարձած են և քաղաքէ քաղաք կը պտտցնեն ու կը քարոզեն թէ իրենք երկրի այսինչ կամ այնինչ կէտին մէջ մեծ պատրաստութիւն կը տեսնեն և թէ իրենք երկրին մէջ գործ ունին, բայց գաղտնի կը պահեն, իրենք չեն հաւատար մանր մունր կռիւներու եւն:

Ճարինք ստամ երբ գեա Ամերիկահայը գիտակցութեան եկած չէր, այն ատեն շատ դիւրին էր փութած խօսքերով զանիկայ խաբել, սակայն այժմ շատ ու շատ ուշ է, քանի որ Ամերիկահայը իր որոշ գիտակցութիւնը և փորձառութիւնը ունի հայ յեղափոխութեան մասին:

Մարդիկ, որոնք գեա երէկ էր որ Լոնտոնի և Փայիզի պուլիտեաները կը շարժէին և հայ յեղափոխականներու գլխուն հայհոյանքի կոյտեր կը թափէին, այսօր եկեր են տոլարներու այս երկիրը մեզի յեղափոխութիւն քարոզելու:

Հայ յեղափոխական գործը կամաց, բայց յարատեւ յառաջ կը գնայ, ի զուր բն առաջադիւններով հիմնուած «փութած» խօսքերը: Ալֆարիտներու կեղծ «Հնչակի Լոնտոնէն այստեղ երեւալը կամ աւելի անգլիական ոստիկանութեան հալածութեամբ այստեղ պատաստանիլը մենք մեր կողմէն կը շը-

նորհաւորենք, բայց մենք միեւնոյն ժամանակ խորհուրդ կուտանք, որ ապէս աւելի հարաւերթան, որովհետեւ այնտեղ աւելի շատ տոլար կայ...
Ե. Պոյաճեան

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԵՒ ԻՏԱԼԿԱՆ ՅԱՐԱՔԻՆԻՍԻՒՅԻՆՆԵՐԸ

—(10)—

Շարժումի ընթացքներուն յայտնի է թէ Լուպէի Հոսմ այցելուին առթիւ Պապը բարկացաւ, ու բողոքեց. իսկ Ֆրանսական կառավարութիւնը այդ բողոքին պատճառով աւելի խիստ դիմաց զէպի կաթոլիկներուն հոգևոր պետ, որ յաւակնութիւնը ունի գեա եւս ինքզինքը աշխարհական պետ ալ ընդունել տալու:

Պապին և Ֆրանսական կառավարութեան միջև եղած ընդհարումին առթիւ Իտալական Երեսփոխանական Ժողովին մէջ ալ հարցապնդումներ և դատափետումներ եղած են պապութեան հասցէին և աւելորդ չենք համարեր այդ եւս մեր ընթացողներուն մատուցանել:

Մայիս 17ի Երեսփոխանական նիստին մէջ, երեսփոխան Մաճա հարցապնդում մը բերեց թէ Իտալական կառավարութիւնը ինչ գիրք պիտի բռնէ Պապին հանդէպ. անոր Լուպէի այցելութեան դէմ բողոքելուն համար:

Եւ դատապարտելով Իտալիոյ պաղարկունութիւնը զէպի վատկանէն սպառնացող վտանգը, որը եկեղեցիներու և կրօնական ընկերակցութիւններու միջոցով իր թակարկները կը լարէ պետութեան դէմ յանուն աշխարհային իշխանութեան ձգտումներու:

Ու առաջարկելով խիստ միջոցներ ձեռք առնել, իր խօսքը վերջացուցեց է հետեւեալովը.

«Այսօրուան Հոռոմը այն Հոռոմը չէ որուն համար կուեցանք և որուն մասին կերպէինք, որուն համար արիւն թափեցինք... Այսօրուան Հոռոմը, Բիզանդիոն է»:

Այս խօսքերը կընդունուին բուռն ծափերով:

Մաճաէն վերջը խօսք կառնէ երեսփոխան կուէրչի, և իր ճառը կը համեմէ հրաշալի ծաղրանքով և հեզուն-

թիւններով:
«Օտար պետութիւնները կըսէ ատե նախօրը, Պապին ամեն մէկ յայտարարութիւնը լուրջ բանի մը տեղ կընդունին, որովհետեւ զայն չեն ճանչնար. վատկանք մեզի համար խոհարար մըն է, որ իր խորտիկները միայն ջրով կը պատրաստէ...
Պապի հետ ունեցած մեր վեճը ընտանեկան գործ է. թող Պապը աղմուկ բարձրացնէ, Աշխարհիս մէջ կատարած լուրջ գործերու հանդէպ, որոնք ամբողջ աշխարհ կը յուզեն, ո՞վ տիրապետէ լուրջը»:

Վատկան պետութիւնը լուրջ հայկական կոտորածներու ատեն, Հուլիսի միջոցով սպանման, Մակեդոնիոյ մէջ կատարուած գաղանթութիւններու և Քիլիկիոյ սարսափներու ատեն, Այժմ գոնէ թողէ որ մեզի դէմ խօսի. մեր մարդն է»:

Կառավարութեան կողմէն խօսքի սկսելով նախարար պետ Ջիօլիտի կը յայտարարէ. Իտալիոյ դահլիճը զբաղած չէ Պապին բողոքով, որովհետեւ այդ բողոքը զրկուած է օտար պետութեանց: Բողոքը բացի վատկանի 71 թակահէն սկսեալ եղած կրկնութիւններէն գրութիւն մը կը պարունակէ նաեւ թագաւորին հանդէպ:

Սակայն Ֆրանսական կառավարութիւնը այդ գրութիւնը այնպիսի ձեւով մը ետ մղեց, որ մեզ շատ ուրախացուց:

Ֆրանսայի նախարար պետ Կոմպիէն խօսքերը, հանդերձ Երեսփոխանական Ժողովին ծափահարութեամբ հանդիսար կերպով շեշտեցին Հոռոմի վրայ մեր ունեցած սրբազան իրաւունքը և յուզեցին Իտալացի ժողովրդը:


Մենք երբեք չենք մոռնար Ֆրանսայի այդ յայտարարութիւնը: Ան յախտեալ պէս կը ջնջէ մեր մէջ անցեալի ընդհարումները:

Ջիօլիտիին այս խօսքերուն վրայ Երեսփոխանական Ժողովը օտարի կը կանգնի և բուռն ծափահարութիւններէ վերջը կաղաղակէ «Կեցցէ Ֆրանսան, Կեցցէ Իտալիան, Կեցցէ Ազատութիւնը»:

Ահա Պապին միջնորդութեան ձգտումներուն արդիւնքը քսաներորդ դարուն մէջ:



ՌՈՒՍԻՈՑ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ



Եալուի քով եղած ուսական պարտութիւնէն վերջը ռուս մամուլը և կառավարական թերթերը կը ցան քիչ մը սիրտ տալ ռուս ժողովուրդին և վստահութիւն ներշնչել զէպի ապագայ յաղթութիւնը: Ճարտական երկու զրահաւորներուն պատահած անակնկալ դժբախտութիւն մը եկաւ ռուսական հաւատքը աւելի եւս ամրացնելու, մանաւանդ երբ ռուս մամուլը կը ցաւ հաւատացնել թէ ճարտացիներուն պատահած այդ բաւական մեծ դժբաղդութիւնը եղած էր ռուսներու ճարպիկութեան շնորհիւ:

Այս գեղեցիկ տպաւորութիւններուն տակ, ինչպէս ըսինք, ռուս ժողովուրդը վստահ իր բաղդին վրայ բաւական հանգստութեամբ ապագային կը դիմէր:

Բայց վերջերս Քիլիզուի գրաւումը ճարտացիներու կողմէն, և ռուսական աւելի խոշոր պարտութիւնը դառնադիտօրէն եկան ժողովրդը համոզելու, թէ ինքը խաբուած է, որովհետեւ ճարտացիին յաղթական կերպով կը շարունակէ իրագործել իր պատերազմական ծրագիրը:

Բարիզի «Լէ թէր» թերթը, որ յարաբերութեանց մէջ կը գրտնուի ռուսական և Ֆրանսական սպայակոյտներու հետ, Բեթերպուրկէն հեռագիր մը տպագրած է, որուն միտքը հետեւեալն է. — Քիլիզուի պարտութեան լուրը Բեթերպուրկ հասաւ Յարին թագադրութեան տարեդարձին օրը:

Գործած տպաւորութիւնը ենթադրութեան տարեդարձին օրը, ժողովուրդը խորին յուսահատութեան մէջ կը երեւնար: Ամենուն զէմքերէն կը նկատուէր որ հոգեպէս սպաննուած են:

Նէվսքի Բրոսքէթիին վրա խոնուած ժողովուրդը կատաղած

ի էր նմանում: Եւ ընտելեան աղաւթ որդիները իրենց վատ էին ըզգում տաճարի միտութեան եւ ներութեան մէջ, ուր սրբագործութեամբ էր զբաղած հայ իվանը:

Հայր Իվանը երեխային կոխեց սառ ջրով լի աւազանի մէջ, ուր լուս էին սառցի կտորներէն: Մանուկը շարունակ կարծում եւ ուժգնպէս աղաղակում էր:

Կեքամար Էտերգիլը՝ մանկան փաթկելով տաք նապաստակի մորթուց շինված վերմակում, մտածում էր, թէ պէտք է կրակոտ ջրով տաքացնել փոքրիկին, բայց չէր համարձակվում իր այդ գաղափարը բարձրաձայն յայտարարել: Երբ նրան հարցրին թէ հրաժարվում է սատանայից, նա չը գիտէր ինչ պատասխանել: Նրա փոխարէն պատասխանեց աստեակ տիրացուն:

Մկրտութեան ծէսի աւարտումից յետոյ սամօեղները կրկին սկսեցին ուտել ու թէլ խմել հայր Իվանի սօտ:

զարմանալով նրա սրտանց հիւրասիրութեան վրա:

Հայր Իվանը սամօեղներին հարցափորձեց ձկնեղի եւ շիկնեղի արտադրութեան մասին եւ հակացաւ որ այդ տարին լաւ արտադրութիւն կայ, տունդրայում աէրտէրի գալստեան են սպասում եւ արդէն եղջերուների համար մամուռ պատրաստել են:

Երեկոյան դէմ քամին միւս կողմից բարձրացաւ, որտեղից Դօլգաններն էին գալիս, եւ սամօեղներին խոցրեց իրենց տունդրան, Հայր Իվանը անձնատուր եղաւ սոփորական հանգստութեան: Ու հանգստացած միջոցին սկսեց հաչել. — Եթէ ամէն օր բուքը այսչափ սամօեղ բերէր, իր եկամուտը որչափ կը լինէր:

2.

Որդու ծննդեան պատին եղած քէֆից սկսած Բոյագիրը բուրովին

փոխվեց:

Այդ օրը նա համոզվեց որ աշխարհիս երեսին օգուց լաւ բան չը կայ: Օղին խմելը համով ու թեթեւ էր, իսկ ձուկ եւ գազաններ որսալը դառն ու զժաւարին: Բոյագիրը համովը դառնից, դժաւարինը դիւրինից գերադասելով, ծերուկ կանաւարէ Մօկսունի նման սկսեց չըջել ամբողջ տունդրան, ոչ թէ որսի գազանների տեղեր որոնելու նպատակով, այլ օղի խմելու տեղեր գտնելու համար: Նա ծուլացաւ ու գրեթէ դադարեց ու եւ է բան արտադրել: Իսկ Լանդուրը կարծում էր որ Բոյագիրը միշտ աշխատանքի վրա էր, եւ շարունակ պարտքով օղի էր ուղարկում, որչափ Բոյագիրը ուզէր:

Բոյագիրը լաւ արդիւնաբերողի հուշակ էր վայելում, Լանդուրն էլ արիստուծ էր որ նա իր տետրակում չէ նշանակված, իրեն համար չէ արդիւնաբերում, այլ պատահած առաջին վաճառականի Լանդուրը գոհ

մնաց որ Բոյագիրը ինքնաբերաբար մտաւ նրա տետրակի մէջ, բայց զարմանում էր որ «յախտեան վճարելու» խոստումը չէր կատարում:

Սկիզբներում Բոյագիրը Լանդուրին ուղարկեց եղջերուների եւ շիկների մի քանի մորթիք: Իսկ յետոյ դադարեց եւ գլուխը ազատում էր խոստումներով:

Ի զուր Բոյագիրի կիներ, Մարիամը յանդիմանում էր ամուսնուն ոչինչ չանելու համար եւ ապացուցում որ իրենց գործերը խանդարվում են, որ հոտերը տիրոջ աչքից հեռու հալվում են ձիւնի պէս: Բոյագիրը չը հարբած միջոցին չփոթված գետնին էր նայում եւ լուռ:

— Ի՞նչ ես լուռ, հարցնում էր կիներ:

— Նա՛ ինձնից զօրեղ է, պատասխանում էր Բոյագիրը:

— Ո՞վ:

— Կրակոտ ջուրը:
(Շարունակելի)

կը խօսէր ստացուած տեղեկու- թեանց մասին :

Մէկ խօսքով այս պարտութե- նէն վերջը ժողովուրդը այլեւս կորսնցուցած է իր հաւատքը դէ- պի ուսական ցամաքային զօր- քերը : Յայտնի կերպով Գուր- բաթիկը կը յանդիմանեն և կա նիծեն : Ոստիկանութիւնը լուռ ու մունջ կանգնած մտիկ կընէ այդ ամէնը :

Գուրբաթիքին՝ իր մեկնած ս- տեն, երբ ժողովուրդը խանդա- վառ և իր ամբողջ յոյսերը անոր վրան բեռնուցած ճամբու կը դը- նէր զայն, նախագուշակելով իր պլանն գալիքը յայտարարեց, թէ կարճ ժամանակէ մը վերջը շատ հաւանական է որ իր հասցէին ալ ուղղուին պախարակութեան խօսքեր, ու այդ գուշակումը ի մեծ գոբախտութիւն ուս ժողո- վրդի, շատ շուտով իրականա- ցաւ : և եթէ այսպէս շարունակ- լին գործերը, կարելի է Գուր- բաթիքին ալ գաւաճան կամ ան- պէտք մարդ մը հուշակուի Գուր- բաթիքին համբերութիւն կտակեց ուս ժողովրդին, սակայն ժողո- վուրդները, մանաւանդ անոնք որոնք միշտ յաղթելու սովոր են, երկար չեն կրնար համբերել այնպիսի պարտութիւններու առ- ջելու, որոնք շնորհիւ պատերազ- մական փառաւոր անցեալ մը կը խորտակուի, և փիթած, խարխը- լած ներկայ մը հանդէս կը բեր- լի :

Գ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մայիս 18ին Պոլսէն վիէննա կը հեռագրեն թէ, ուս գնդապետ Լապակի յանձնարարուած է Յարի կողմէն ճամբորդել վանայ և էր- զրուսի վիւայէթներու մէջ քեր- տերուն և հայերուն կացութիւնը ուսումնասիրելու համար :

— Թուրք կառավարութիւնը որոշած է յոյն հպատակներէն բա- թէնթի և տուրքի վճարումը վեր- ցնել, կը կարծուի թէ այս առթիւ իզմիրի դէպքին պէս միջադէ- պեր պիտի պատահին :

— Մայիս 20ին Պոլսէն վիէննա կը հեռագրեն թէ ներում ստա- ցած շատ մը ապստամբ մսկիդո- նացիներ կրկին հրոսխմբեր կազմել սկսած են և շատ մը յոյ- ներ սպաննած :

— Մայիս 19ին Պոլսէն վիէննա կը հեռագրեն թէ Պուլկարիոյ իշ- խանը Միւնիխ փաշայէն Սուլթա- նի հրաւիրական նամակը ընդու- նելով, խօստացած է երթալ, բայց առանց որոշելու թէ երբ :

ՌՈՒՍԻԱ

Պերլինի թերթ մը Բեթեր- պուրկէն կիմանայ որ իշխան Տօ- կորուկի նէվսթիյ Բուրքէթիին վրայ հանդիպելով արտաքին գործոց նախարար Լամտօրֆին անոր քանի մը վիրաւորական խօսքեր ուղղելով ապտակեր է, և տոր պատճառը կը համարուի ան որ Տօկորուկիյ հակառակ է Լամտ- տօրֆի քաղաքականութեան և Ռուսիոյ վերջին զժբաղուութեանց պատճառը զայն կը համարէ :

— Ռուս հռչակաւոր գրագէտ Անտօն Չէխով պատերազմի դաշտ մեկներ է իբր կամաւոր բժիշկ :

— Լեհացի հռչակաւոր գրագէտ Սէնքէվիչ յոյնպէս պատերազմի վայրը մեկներ է իր նոր գրելիք մէկ վէպին համար ներթեր հա- լաքելու :

— Բեթերպուրկէն և րոպական թերթներուն կը հաղորդեն որ Յարին ջղային դրութիւնը խան- գարուած է, վերջին գոբաղու- թիւններուն պատճառով :

— Օրեօլ զրահաւորը ներստար- ուած է Կրօնստոտի նաւահան- քիտը : գաւազու թեան պատճա- ռած փաստները շատ մեծ են :

— Մայիս 17ին Բարիդի թեր- թերէն մէկուն Բեթերպուրկէն կը հաղորդեն թէ Բաթիկեան նա- լատորմիւր յունիս 24ին պիտի մեկնի Մայրաքոյն Արեւելք :

— Բարիդի «Մարէն» թերթը Բեթերպուրկէն կիմանայ որ ուս կառավարութիւնը սկսած է Կրօնստաղը ամրացնել :

ԱՆԳԼԻԱ

Մայիս 18ին կը հեռագրեն թէ Լօնտօնի կառապանները գործա- դուլ ըրիւր են :

— «Տէյլը Մէյլ» թերթը կը յայտարարէ Անգլիացուց մէկ յաղթութիւնը Թիպէթի մէջ : 11 մամ պատերազմութեան վերջը, Թի- պէթիցիներուն մեծ փաստնէր պատ- ճառելով, Անգլիացիները գրա- լեր են Եանկ-Տէվ բերի՛ր :

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Ս Ե Ր Ս Ջ Մ

Պերլինի «Նիվսթիյ» թերթը մայիս 20ին կը հաղորդէ որ տե- ղական պօրսային մէջ լուր տա- րածուեր է թէ ժէնէրալ Գուր- բաթիքին ծանր պարտութիւն կը- րեր է :

— Թօքիօն մայիս 20ին Լօն- տօն կը հեռագրեն թէ ժէնէրալ Գուրբաթիքին և Գուրբի մեծ ճակատամարտ ունցեր են Սայ- մօցիի քովերը : Գուրբաթիքին բոլորովին պարտուեր է և ուս զօրքը ստիպուեր է նահանջել : Ճարտնացիները բաղմաթիւ ու- սական թնդանթներ և ամբողջ վաշտերով քաղաքներ գերեր են :

— Նոյն թւականին Լեաօան- կէն Պերլին կը հեռագրեն որ ի- րապէս ընդհարում տեղի ունե- ցեր է Գուրբի և Գուրբաթի- քին միջեւ : Ճակատամարտը ամ- բող օրէն տեղի տեւեր է : Եր- կու կողմէն ալ մեծ կորուստ կայ : Ռուսերը նահանջեր են :

— Տէյլը Մէյլի Բեթերպուրկի թղթակիցը մայիս 19ին Լօնտօն կը հեռագրէ թէ Գուրբաթիքին հրամայած է որ կրնորը և երե- խաները իսկոյն հեռանան Լեաօ- նանկէն, Մուկտէնէն և Խարպի- նէն :

Գինչաուի ճակատամարտէն վերջը ճարտնացուց ձեռք ան- ցած ուսական բոլոր թնդանթ- ները ալ վերադարձնել կը գտնուին եղբր : Երկու հազար վիրաւոր ճարտնացի զինուորներ նաւերով ձարնիւ գրկուած են :

— «Տէյլը Գրօնիք» թօքիօն մայիս 18ին, կիմանայ թէ Բօթի- Արթուրի պաշարումը պիտի սկսի յունիս 15ին :

Ճարտնական սպայակոյտը որո- շած է ինչ զոհ ալ որ պահանջուի, անպատճառ Բօթի-Արթուրը պէտք է գրաւուի : Թօքիօ գտնուող օ- տար թերթերու թղթակիցները, որոնք տրամադրութիւն ունին ներկայ ըլլալ Բօթի-Արթուրի վը- րայ ըրուելիք յարձակումին հա- զորագրուեր է պատրաստ ըլլալ մինչեւ յունիսի տալ :

Առաջին զօրաբաժինը, որուն հրամանատարն է իշխան Խուսի՛նի, Միքատօնի հօրեղբորդին, Մի- քատօնի հրաման խնդրեր է, իբ- րեւ առանձնաշնորհում, թոյլ տրուի մասնակցիլ Բօթի-Արթու- րի վրայ ըլլալիք յարձակումին :

Ճարտնացիները մինչեւ Գին- չաուի գրաւելը 9 անգամ յար- ձակում ըրեր են այդ ամբողջեան վրայ :

Բէթիքի գործակալութիւնը մայիս 18էն կը հաղորդէ որ ուս- սիւրը արագութեամբ պարպեր են Գալին, նախ քան պարպելին յանացեր քաղաքը այրել, բայց չեն յաջողեր : Ժէնէրալ Օքուին զօրքերը անմիջապէս Գալին գրաւեր են :

— Մայիս 18ին Բեթերպուր- կէն կը հեռագրեն թէ Լեաօանկէն եկած հեռագրիներու համաձայն Խարպիին և Մուկտէնի միջեւ գտնված տարածութեան մէջ կա- ցութիւնը շատ անհանգստացնող է շնորհիւ շինական զօրքերու և խունիուզներու շարժումներուն :

— Մայիս 17ին Թօքիօն կը հեռագրեն որ ժէնէրալ Օքու իր կառավարութեան հեռագրած է թէ ուսները պարպեր են Խա- լչինվանը, Եկէկ-Շէպուս և Ման- կօլիանը : Ճարտնական զօրքերէն մաս մը իսկոյն գրաւեր է Թալէյն- վանը, ուր գտեր է ուսական 4 թնդանթներ :

— Մայիս 17ին «Մայմզ» թեր- թը վէյլապէյէն ստացուած հե- տեւեալ հեռագրեր հրատարակած է — ուս ժէնէրալ Շօնէլի յանձ- նուած էր մինչեւ վերջը պաշա- պանել Գինչաուի և Բօթի-Ար- թուրի միջեւ գտնուած տարա- ծութիւնը : նպատակ ունենալով արգիլել ճարտնացիներուն Մուկ- տէնի վրայ յարձակում գործել, և ժէնէրալ Գուրբաթիքին միջոց սալ իրեն եղած յանձնարարու- թիւնը գլուխ բերելու համար Շօնէլ յաջողած է իր խնդրին մէջ, շինելով շարք մը ամրու- թիւններ : Ժէնէրալ Օքու կրցեր է միւսն գրաւել ամբողջութեան- լուս առաջին գիծը, ուրեմէ մին- չեւ Բօթի-Արթուր հասնելը ճա- րտնացիները դեռ շատ դժուար- րութիւններ ունին յաղթելիք :

— Լօնտօնէն մայիս 17ին կը հեռագրեն թէ բոլոր թերթերը հրացած են Գինչաուի վրայ ե- ղած յանդուգն յարձակումին առ- թիւ : Կը համեմատեն ուսներու 77 թւականին Իլէֆուայի դէմ ե- ղած արիւնալի յարձակումին հետ, ու կըսեն թէ ճարտնացիներուն յաղթութիւնը Գինչաուի քով կը նսեմացնէ Խուս և Խուսէն միաց- եալ զօրքերու Իլէֆուայի վրա տա- րած յաղթանակը :

Տօպրիչ, 17 Մայիս 1904

Յարգելի...

Տեղույս նախկին երիտասար- ղութիւնը 1897 թւականին բա- ցած էր ընթերցարան մը : շնչ գրիտեր ինչ պատճառաւ է որ ե- րեք ամիսէ ի վեր դադարած և ու նեցած գոյքերը հոգաբարձու- թեան յանձնուած էր : Ներկայ երիտասարդութիւնը ընթերցա- րանի օգտակարութիւնը զգալով աշխատած է վերականգնել նախ- կին ընթերցարանի անուան տակ որ էր «Հայ Երիտասարդութիւն» անուամբ ընթերցարան մը : և մինչեւ օրս ունեցած է 40է անե- լի անդամներ և 120 ֆրանքէ ա- լելի հանգանակուած նուէրներ :

Գործ. ժողովու իր շնորհակա- լութիւնը կը յայտնէ ներկայ հո- գաբարձութեան որ նախորդ ըն- թերցարանի մնացած գոյքերը սուանց ու է առարկութեան յանձնեց : նամանաւանդ ու- րախ ենք որ տեղույս հայ հասա- րակութիւնը քիչ թէ շատ իրեն նիւթական և բարոյական ոյժե- րով քաջալերեց զմեզ :

Ի դիմաց Գործ. ժողովույ Հայ-Երիտ. Միութեան Տօպրիչի Ատենապետ Արմենակ Տրդատ Եղապետան Արմենակ Փէշեւապետան (Կիւք)

Отговорникъ Мурадъ-Браносиѣ Печатница «Взаимность» Варна